




Մ Ր Մ Ր Մ Տ

ԹԻԻ Զ — ՇՐՋԱՆ ԺԹ.

1886

ՏԱՐԻ ԺԹ. ՅՈՒՆԻՍ 30.

ԿՐՈՆԱԿԱՆ

ՍԾԾԱՆ ԻԻՂ

ԵԻ

ՕԺՈՒՄՆ.

• Որ յառաջագոյն յօրէնան, յօրինակ Միաձնի քո, Հայր երկ-
նաւոր, ետուր զօրութիւն ի յիւզ սրբութեան յօժուան օժե-
լոյ. հեն ընդ այս իւզոյս զերկնային քո շնորհս * * * * *

• Որ զարդարես սովա ի հանդերձս լուսափայլս եւ զերա-
պայծառս զհարսնացեալ եկեղեցի քո սուրբ, մանկուծք
սորա ընդ հրեշտակս օրհնեն սուրբ զերրորդութիւնդ .
(Շարակ. Ս. Միւսնիւ տես Մաշտոց ձեռաց ի կարգ
Մկրտումեան) .

Շատ շատերը Հայերին նմանեցնում են Հրէաներին: Արդարեւ
Հրէայք եւ Հայք ունին ընդհանուր նմանութիւն: Թէ Հրէայք եւ
Թէ Հայք փայրափայտին ցրուած են երկրագնդի տակնայն կողմը,
Հրէայք ունին իրանց Երուսաղէմը, Հայք եւ ունին իրանց Եջմիա-
ծիմը: Երուսաղէմում գոյնջում են Հրէից անցեալ փառաց նաւիրա-
կան յիշատակները, Եջմիածնում եւս գոյնջում են Հայոց անցեալ

և ներկայ փառաց և վերականգանութեան յիշատակը և կոթողը Ս. յս ընդհանուր նմանութեան հետ կայ և ընդհանուր տարբերութիւն հայի և հրէի մէջ :

Ի՞նչ և թէ՛ Հրէայք և թէ՛ Հայք վայրավատին ցրուած են աշխարհիս ամենայն կողմը. բայց հրէան հոգւով և մարմնով կապուած է երուսաղէմի և հայրենի յիշատակների հետ, դարերով անտուն, անտեղ, օտար, պանդուխտ և հալածական է մնում: Նորա կէտնպատակին է շահուել, շահուել ինչպէս և լինի, բայց կրօնքով, սովորութեամբ, յատկութեամբ և կենցաղավարութեամբ անխառն մնալով իւր շրջապատող օտար ազգերի մէջ. այսպիսի օտարոտի կեանքով հրէայն անող և ատելի դարձած՝ շատ սակաւ անգամ է պատահում՝ որ ձուլուի օտարի հետ: Իսկ հայը գաղթելով օտար երկիր՝ դեռ տաննակ տարին չըլրացած՝ ունենում է սեպհական տուն և ազգային եկեղեցի: Շուտով յարմարւում է իւր շրջապատող օտար ազգին, կորցնում է իւր ազգային սովորութիւնը, յատկութիւնը և կենցաղավարութիւնը՝ պահելով միայն կրօնի կմախքը. որովհետեւ կրօնը առանց ազգային աւանդութեանց չէ ինչ աւելի՝ քան մի կմախք: Հայը իւր ընդել բնաւորութեամբ շուտով իւրացնում է օտարի բոլոր ազգային սովորութիւնները, յատկութիւնները և կենցաղավարութեան ձևերը. և այս մասին Ս. Գրքի ճիշտ աշակերան է. նորա համար « յիշխարս ոչ հրէի և ոչ հեթանոսի » :

Հրէան իւր այդքան փայփայած երուսաղէմում և հայրենիքում չունի այժմ ոչ մինը իւր նուիրական տեղերից. Սողոմոնի տաճարը մահմետական մզկիթ է դարձած, Սիօնը՝ օսմանեան պետութեան բերդ, տաճարի սուրբ սպասները յայտնի չէ ինչ են եղել, Բայց հրէան դարձեալ հրէայ է և պիտի մնայ ակնկալութեամբն՝ թէ մեսիան կը գայ, Իսրայէլի որդւոցը լըժուղովէ աշխարհի բոլոր ծայրերից և կը վերականգնէ Իսրայէլի կորցրած փառք՝ յաւիտեան թագաւորելով, ահա մի յոյս՝ որ յարատեւութէ հաւատքով և կենդանի է մնում ազգային աւանդութիւնները տակուն եռանդեամբ սիրելովը, չընայելով որ երուսաղէմի վերջին աւերումից յետոյ մօտ 1800 տարի է, որ տարագրուած է իւր հայրենիքից: Իսկ հայը իւր ճկուն բնաւորութեամբ և յարմարող յատկութեամբ տարագրութեան մէջ ապրում է ինչպէս ապրում են իւր շրջապատող ազգերը, և պատրաստ է եկեղեցական արարողութիւններն և ս յարմարացնել իւր շրջապատող ազգի եկեղե-

ցական արարողութեանց, և եթէ փոքր ինչ տակաւութիւն է ցոյց տալիս այդ է շնորհիւ բուն հայրենիքում մնացած նահապետի խեղճ ժողովրդեան, և հոգեւորական գասի քերմեռանդն սիրոյն՝ որոնցով կանգուն է իւր նուիրական սրբութիւնը — Ս. Էջմիածնի մայր Աթոռը՝ Լուսաւորչի հայրապետական յաջորդութեամբ, որ մատակարարում է իւր որդւոց կրօնական և բարոյական անխաբախ սնունդ, ղեկավարելով կրօնական գործերը՝ եկեղեցական և ազգային օրէնքով, իսկ կրթութեան գործը՝ կրօնական և ազգային ուղղութեամբ:

Այս դէպքում հայի գրութիւնը նախանձելի է. որովհետեւ երբ հրէան ողբում է միայն իւր կորցրած սրբութիւնները հեռաւոր ապագայում գարձեալ գտնելու յուսով, հայը արդէն շահվում է իւր անկորուստ պահպանուած սրբութիւններով, բայց չընայելով այս բարեյաջող հանգամանքին հայքուելի տրամադիր են օտարանալու:

Հրէայք իւրաքանչիւր տարին երեք անգամ և յատկապէս Զատիկի տօնին ժողովում էին Վկայութեան Խորանի մօտ, յետոյ երուօղէմ՝ տաճարը, տօնելու իրանց ազատութիւնը եգիպտական ստրկութիւնից. (Եւ. ԻԴ. 15-17. և Աուկ. Բ. 41, 42.) Հայք միայն համախմբում են Էջմիածին՝ տօնելու միւռնօրհնութեան նուազատիքը: Ս. Միւռնիւր հայրապետական Աթոռից իբրեւ միութեան զօր՝ բաշխում է բոլոր հայերին՝ նոցա Մայր Աթոռի և միմեանց հետ կապելու՝ իբրեւ մի դրոշմով կնքուած երկնաւոր Հօր օրգեգիրներ՝ հայ անուամբ: Ս. Միւռնիւր այս մեծ նշանակութիւնը ոմանք գիտենալով են համախմբում Մայր Աթոռս, իսկ ոմանք բնազգմամբ և հաւատքով, եւ այդ հաւատքով փրկվում են նոքա կրքուտից, ըստ բանի Փրկչին թէ «Հաւատք քս կեցուսցեն զքեզ»:

Օծումն, որով և Օծման Իւղը, իբրեւ յատկացուցիչ նշան կընքելու Աստուծոյ անունով՝ շատ հին ժամանակներից կիրառութեան մէջ է: Ս. Դրբի մէջ օծման դէպքեր յաճախ տեսնու մենք մենք, որով և գատաւարակիւմ թէ Օծումն աստուածային շնորհաց մի զգույն նշան է, սրբիչ և Աստուծոյ շնորհաց ընդունարան կացուցանող:

Յակալք նահապետը իւր Եսաւ եղբօրը յատկացեալ անդրանկութեան օրհնութիւնը հօրից ստանալուց յետոյ, երբ եղբօր վրէժխնդրութիւնից ազատուելու համար փախչում էր դէպի Միջագետք՝ Եթէլ հասնելիս մտայոյդ գլուխը մի քարի վերայ դրած

քնեց. աւելեան մէջ ահաւ մի սանդուխ՝ երկրից երկինք ըստ-
բացած, որի վերայով հրեշտակները ելել էջ ի նն ահում. Աստուած
նորան քաջալերեց և ստաց. « Այս երկիրը, որի վերայ դու կաս,
քեզ ու քո սերնդին պէտք է սամ » : Յակովբ արժնեց և սոսկա-
լով ստաց. « Այս տեղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Տուն Աստուծոյ և
Դուռն երկնից » : առաւ իւր գլխի տակի քարը, յիշատակի ար-
ձան կանգնեցրեց և օթեց (Ծնն. ԻԲ. 10-20. և ԼԱ. 13) ուխտե-
լով. « Եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս. . . և դարձուցէ զիս
աջամբ ի տուն հօր իմոյ՝ և եղիցի ինձ տէր յԱստուած, և վէմն
զոր կանգնեցի արձան՝ եղիցի ինձ Տուն Աստուծոյ : (Ծնն. ԻԲ.
20—22) » :

Բեթէլը Աբրահամի և նորա սերնդի համար նշանաւոր. Աստու-
ծոյ երանաւէտ խոստման և աւետեաց ուխտատեղի էր. դուռն՝
որից անցնելով Աբրահամ և իւր սերունդը՝ պիտի ժառանգէին Ա-
ւետեաց երկիրը : Այսպէզ, Բեթէլում, Աստուած Աբրահամին խոս-
տացիլ էր ժառանգեցնել Քանանացւոյ երկիրը, երբ նա իւր հայ-
րենի տանից դուրս գալով՝ օտար ու անօգնական, չրգիտեալով
թէ ուր է գնում և ինչի՝ չուումէր գէպի հարաւ՝ Քանանացւոյ
երկիրը : Աբրահամ ևս այդ տեղ սեղան էր շինել (Ծնն. ԺԲ. 7—
9), թերեւ և օծել, որին հետեւելով նորա թաւն Յակովբ՝ սեղան
շինեց և օթեց :

Արեւմտ օձման խորհուրդը սկսումէ. Աբրահամից և իրագործ-
վում Յակովբով : Կոստան խոստմաբարէն Աստուծոյ հրամանին
համեմատ կերպով որեց Սծման Իւզի պատրաստութիւնը և Սծումն :
Նա Վկայութեան խորանի հանդերձանքը ու պաշտօնից դուրս
կարգաւորելուց յետոյ, օթեց վկայութեան խորանի յատկացեալ
տեղերը յանուն Աստուծոյ նախագործելու և սրբելու համար.
օթեց և քահանայապետ Ահարօնին ու նորա քահանայ որդւոյը
որ իբրեւ օծեալ և ուխտաւոր, սրբում և աւեր չորս ոչ շնորհօք
աւելցեալ անձինք Վկայութեան Խորանում Աստուծուն ողորտաւո-
րեն Աստուծոյ ու մարդկան մէջ միջնորդ հանդիսանալով :

— Սծման իւզը պատրաստելու համար Աստուած խօսումէ Կոս-
տանի հետ և ասում. « Եւ դու աւ քեզ խունկս անուշաւնս. ծաղիկ
ընտիր զմլոռնենեաց հինգ հարիւր սիկկ, և կինամանն զանոյշ
զկէս ոյնորիկ՝ երկերիւր յիսուն, և զխունկեղէն զաւնոյշ՝ երկե-
րիւր յիսուն, և հիրիկ՝ հինգ հարիւր սիկկ ըստ սրբութեանն, և

իւղ ձիթենեաց հիմենեաւ միտի։ Եւ արտայեալ զայն իւղ՝ յօծումն սրբութեան։ իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց։ իւղ յօծումն սրբութեան լինիցի։ (Ելք գլ. 1. 22—25)։

— Աստուած Վկայութեան Խորանը օծելու համար պատուիրումէ Մովսէսին։

« Եւ օծցես ի նմանէ (յիւղոյն) զԽորանն Վկայութեան. և զսեղանն և զամենայն զկահ նորա։ Եւ զաշտանակ և զամենայն զկահ նորա. և զսեղանն խնկոյ։ Եւ զսեղանն ողջակիզաց և զամենայն զկահ նորա. և զաւաղանն և յատակս նորա։ Եւ սրբեսցես զնոսա։ Եւ եղիցի սրբութիւն սրբութեանց. ամենայն որ մերձենայցէ ի նոսա՝ սրբեսցի։ (Ելք գլ. 1. 26—29)։

— Աստուած Ահարոնին և նորա որդւոցը օծելու համար պատուիրումէ Մովսէսին։

« Եւ զԱհարոն և զորդիս նորա օծցես և սրբեսցես զնոսա ինձ ի քահանայութիւն։ Եւ ընդ սրդիան Իսրայէլի խօսեսցիս և ասասցես. իւղ յօծումն օծութեան սրբոյ եղիցի ձեզ յազգս ձեր։ Ի մարմին մարդոյ՝ ոչ օծանիցի. և ըստ այդմ՝ հանգերձանի ոչ առնիցէք ձեզ այգայիսի. զի սուրբ է և ի սրբութիւն եղիցի ձեզ։ Որ ոք առնիցէ այգայիսի. և որ ոք տայցէ ի գմանէ այլազգւոյ. սատակեսցի ի Ժողովրդենէ իւրմէ։ (Ելք գլ. 1. 30—33)։

Այսպէս ուրեմն սուրբ Յովնան Եւղը իբրեւ յառն Աստուծոյ սրբելու և նուիրագործելու խորհուրդ էր հաստատուած Իսրայէլի Ժողովրդի մէջ և իբրեւ Սուրբ Հոգու շնորհաց տուչութեան զգալի նշան էր ընդունուած Հին Աւիստի եկեղեցւոյ մէջ։ Վկայութեան Խորանը իւր յատկացեալ տեղերովը օծուելով՝ տուն Աստուծոյ դարձաւ. սրբուեց և նուիրագործուեց. քահանայք օծուելով՝ Սուրբ Հոգւոյ շնորհաց ընդունակ դարձան Վկայութեան Խորանի սպասարարութեան և Աստուծոյ ու մարդոց մէջ միջնորդ լինելու համար։ Այսպէս Մովսէսի ձեռքով և Ահարոնի ու նորա որդւոց օծմամբ՝ օծման խորհուրդը յարատեւեց Հրէից քահանայական դասու մէջ, իսկ Վկայութեան Խորանի օծման արարողութիւնը յարատեւեց տաճարի մէջ։

Օծուեցին Հին - Աւիստի մարգարէք և թագաւորք. և օծման միջոցաւ Ս. Հոգւոյ շնորհքը ստանալով՝ զօրացան իրանց պաշտօնի մէջ։ Սաւուղ իւր հօր գրաստը փնտռելու գնացած լինելով՝ Սամուէլից սուրբ օծումն ընդունեց և զօրացաւ ամբողջ Իսրայէլի

ժողովուրդը միացնել և թագաւորել Իսրայէլի փառաց և զօրութեան հիմն դնելով. Դաւիթ օծմամբ իւր հօր խաշանց հովուութիւնից Իսրայէլի թագաւորութեան Եթառ բարձրացաւ և Իսրայէլի փառքը մեծացրեց. այսպէս և հետագայք:

Քրիստոնէական եկեղեցին Ա. Օծման խորհուրդը և Օծման Եւզի գործածութիւնը՝ հետեւելով Հին - Աւետիքի ընդունեց իբրեւ առաջինը իւր արարողութեանց մէջ, և այս ևս Փրկչի բանին համեմատ թէ՛ Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ՝ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ. (Մատթ. Ե. 17):

Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ առաքեալներից սկսուած Ա. Օծումն երեք գէպքումն է գործածուիմ. Ա. իբրեւ կնիք որդեգրութեան Աստուծոյ՝ որ մկրտութիւնից յետոյ է կատարուիմ և Դրոշմ է կոչուիմ. Բ. իբրեւ զգալի նշան Ա. Հոգւոյ շնորհաց՝ որ ձեռնադրութիւնից յետոյ է կատարուիմ. Գ. իբրեւ նշան կենսատու զօրութեան Աստուծոյ՝ որ հիւանդի վերայ է կատարուիմ և Օծումն Հիւանդաց է կոչուիմ:

Այս երեք խորհուրդներն ևս առաքելոց ժամանակով շատ անգամ միայն ձեռք գնելով և ազօթելով էին կատարուիմ, որովհետեւ առաքեալք դեռ նոր պէտք է եկեղեցիներ հաստատէին հեթանոսների մէջ, ուր Օծման Եւզի հանգերձանքը չէր կարող իսկոյն պատրաստուիլ:

Ա. Դրոշմ՝ ի կնիք որդեգրութեան Հօր Աստուծոյ:

— Առաքեալները որ ելու ազգէմումն էին, երբ լսեցին թէ Սամարիայում ևս ընդունեցին Աստուծոյ խօսքը, Պետրոսին և Յովհաննէսին ուղարկեցին. որոնք տեղ հասնելով նոցա համար ազօթեցին, որ Սուրբ Հոգին ստանան. որովհետեւ, թէև մկրտուած էին Յիսուսի անունով, բայց Սուրբ Հոգին չէր իջել նոցա վերայ. « Յայնժամ՝ Եփէ 3է-ն ի վերայ նոցա, և առնուին զՀոգի Սուրբ. » (Գործք Առաք. Ը. 14 - 17):

— Պօղոս Եփեսոս հասնելով տեղւոյն հաւատացիականներին հարցրեց թէ Ս. Հոգին ստացել են. երբ իմացաւ թէ միայն Յովհաննէս մկրտութեամբ են մկրտուել (յապաշխարութիւն), Յիսուս Քրիստոսի անունով մկրտեց. « Եւ ի Եփէ ի վերայ նոցա Պաւղոսի ղ3է-ն,

եկին Հոգի Սուրբ ի վերայ նոցա. խօսէին լեզուս և մարգարէանային . . . (Գործք Առաք. գլ. ԺԹ. 5—6)։

Ձեռք դնելով Դրոշմի՝ Օծումն էր կոչում մ։

— Պօղոս առաքեալը կորնթացիներին գրած իւր Բ. թղթում ասումէ. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոսս և ՍԺ զմեզ, Աստուած է. որ և կենքեաց զմեզ և ետ զաւհատուչեաց Հոգւոյն ի սիրտս մեր . . . (Բ. Կորնթ. Ա. 21—22)։

— Յովհաննէս աստուածաբան աւետարանիչը հաւատացեալներին նեւի մոլար փորձապետութիւնից զգուշացնելու համար Ա. Կաթուղիկեայց թղթում ասումէ. «Եւ դուք ՅովնիԹիԻն ունիք առ ի Սրբոյն և գիտէք ամենեքին . . . (Բ. 20)։ «Եւ դուք ՅովնիԹիԻն, զոր ընկալայք ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ, և չէ ինչ պիտոյ՝ եթէ որ զձեզ ուսուցանիցէ փասն ամենայնի. և ճշմարիտ է և չէ սուտ. որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմին . . . (Նոյն 27)։

Հայաստանեայցս եկեղեցին ևս իրրեւ անգամ եկեղեցւոյն Քրիստոսի՝ ընդունել է Դրոշմի խորհուրդը և իրրեւ կնիք Յիսուսի*) և իրրեւ զգալի նշան Ս. Հոգւոյ շնորհաց՝ պնդմէ մկրտելոյ զգայարանքներին վերայ. որպէս զի այդ զգայարանքները զարգանալով գործեն ինչպէս վայել է աւետարանի աշակերտի։

— Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տրդատ Թագաւորին և զօրականին եփրատ գետում մկրտելու Ժամանակ, անհնարին լինելով առ բազմութեան մկրտելոց մէկիկ մէկիկ գրողմել, Օծութեան Իւզը Թափեց մկրտուողների վերայ. «Եւ իւզն օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկան՝ շրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկաւն խաղայր . . . (Ագաթանգ.)։

— Ագաթանգեղոսը Ս. Գրիգոր Լուսաւորչի առաքելութեան համար խօսելով ասումէ. «Բազմացոյց զամենայն եկեղեցիս, և կացոյց քահանայս, և Քրիստոսսեան գրոշմովն զամենեւին առհասարակ քնծայեցուցանէր լինել ամենեցուն Հոգւովն Սրբոյ։

— Դրոշմի խորհուրդը մատակարարելու համար Մեծ Մաշտոյր հրահանգումէ. «Լիու քահանայն զսուրբ Իւզն ի յալին իւր և կնքէ սուրբ իւզովն զճակատն . . . զայսն . . . զականջսն . . . զհաստոսելին . . . զքերանն . . . զձեռսն . . . զսիրան . . . զքամակն . . . զուտն»։

(*) Մաշտ. ձեռաց ի կարգ Դրոշմի.

— Ս. Ներսէս Շնորհալին Սաղմոստացիների համար գրումէ. « Սուրբ միւռնաւն զբոշմեցէք զճակատն և զգոյարանն, ասելով՝ յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արքայ : »

—

Բ. Օծուամն ձեռնադրութիւնից յետոյ իրրե նշան Սուրբ Հոգւոյ շնորհաց ընդունելութեան, Աստուծոյ օրէնքը ուսուցանելու, և իբրեւ ուխտաւոր ու Աստուծոյ պաշտօնեայ Ս. Հոգւոյ շնորհօք զօրացեալ՝ Աստուծոյ և մարգկան մէջ միջնորդ հանդիսանալու :

— Վկայութեան խորանին քաղաւորելու համար Աստուած հրամայումէ Մովսէսին. « Եւ որդւոցն Ահարոնի արասցես պատմութեան, և կամարս և խոյրս ի պատիւ և ի փառս. և զգեցուցես զայն Ահարոնի եղբօր քում, և որդւոց նորա ընդ նմա. եւ օծցես զնոսա, և լցցես զձեռս նոցա (իւզով օծութեան) և սրբեցես զնոսա, զի քահանայացին ինձ : » (Եւք. գլ. ԽԲ. 40—41) :

— Էարկ Մովսէս յիւզոյ օծութեան ի գլուխն Ահարոնի և օծգնա և սրբեաց զնա : (Ղևտ. Ը. 12) :

— Օծեալ կոչոււմէին և նաքա, որոնք թէ և զգոյապէս օծուած էին, բայց դարձեալ Ս. Հոգւոյ շնորհօք աւելեալ էին : Խնչպէս Փրկիչն Յիսուս մարգարէից և առաքելոց բերանով Օծեալ է կոչուում. « Հոգի Տեառն ի վերայ իմ, Վասնորոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս . . . » (Ղուկ. Դ. 18). « Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ տէր ի քաղաքի Դաւթի » : (Ղուկ. Բ. 11) :

Հայաստանեայց եկեղեցին ընդունել է ձեռնադրութեան ժամանակ օծման անհրաժեշտութիւնը և կատարումէ. (տես Մաշտոց ձեռնադրութեան քահանայից, եպիսկոպոսաց և կաթուղիկոսի) :

—

Դ. Օծուամն Հիւանդաց իրրե մեղաց թողութեան և մարմնոյ առողջութեան համար աստուածային ապաքինիչ զօրութեան նշան :

— Մարկոս Աւետարանիչը (գլ. Զ. 7—13) պատմելով Յիսուսի իւր աշակերտներին առաքելութեան իշխանութիւն տալու հանգամանքը, առաքեալների համար ասումէ. « Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեցին. և դեռ բազումս հանէին և օծուէին իւզով զբազում հիւանդս և բժշկէին զնոսա » (12—13) :

— Յակովբոս առաքեալը իւր Աստ. թղթում (գլ. Ե. 12—14) հաւատացեալներին զրկոնքների մէջ եղած ժամանակ յուսացրելու, միմեանց հետ սիրով վարուելու, և զուր տեղը Աստուծոյ անունով չերդուելու պատուէրը տալուց յետոյ՝ յորդորումէ՝ «Վշտանայցէ որ ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրիցի որ, սաղմոս ասացէ. հիւանդանայցէ որ ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն և արասցեն ի վերայ նորա աղօթս, շփէն իւրով յանուն Տեառն. և աղօթքն հաւատով փրկեսցէ զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր, և եթէ մեզս ինչ իցէ գործեալ՝ թողցին նմա» (12—14) :

Հիւանդաց Օծումն միմիայն աղօթքով և ձեռք զնեկով :

— Պօղոս առաքեալը Հռոմ գնալիս՝ նստարեկոթեան պատճառով Մելիտոնէ կղզին ընկաւ. տեղւոյն գլխաւորը հիւանդացած լինելով՝ Պօղոս հրաւիրուեց և աղօթելով ու հիւանդի վերայ ձեռք զնեկով բժշկեց. (Գործք Առաք. գլ. Խ. 7 և 8) : Ինքն Յիսուս բժշկումէր հիւանդներին աղօթելով և ձեռքը նոցա վերայ զնեկով : (Մարկ. 2. 5 և Ե. 32 : Դուկ. Գ. 41) և այլ տեղեր :

Հայաստանեայցս եկեղեցին հիւանդաց վերայ միայն աղօթումէ, որովհետեւ գլխաւոր խորհուրդը աղօթքն է : Ըստ այնմ. «Աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն» (Յակ. Ե. 14) : «Աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկի՞լք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ յօգնականութիւն» : (Նոյն 15—16) : — «Ոչ իւզն տայր զառողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն» : (Սարգ. Ծնորհ. Մեկն. Յակ. ճառ ԺԱ) :

Օծման Իւրը Հին—Ուխտի եկեղեցու մէջ սրբարար էր համարուած և պատրաստութիւնը կատարւումէ ըստ հրամանի Աստուծոյ որ առ Մովսէս : Իսկ օծեալը Հին—Ուխտի եկեղեցու մէջ սրբեալ և ընդունարան էր համարւում Սուրբ Հոգու շնորհաց : Հին—Ուխտի եկեղեցու թէ՛ Օծման Իւրի պատրաստութեան և թէ՛ օծելոց պաշտօնի մասին մենք տեղեկացանք Ա. Գրքից :

Որովհետեւ մեր Փրկիչ Յիսուս քարոզելիս ասաց «Աի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ՝ զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ ընուլ» : (Մատ. Ե. 17) : Այս պատճառով ևս քրիստոնէական եկեղեցին ընդունեց Օծման Իւրի գործածութիւն և Օծումն, որ առաքեալը ևս ընդունել և վերահաստատել էին. ինչպէս տեսանք :

Հայաստանեայցս եկեղեցւոյ մէջ Օծման Իւղի գործաճութիւնը մինք տեսանք հենց նոյն ինքն մեր ազգի քրիստոնէական լուսով լուսաւորելու և մկրտութեամբ յորդեգրութիւն երկնաւոր Հօրն ընդունելու առաջին օրը, սրովհետեւ Ս. Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ Օծման Իւղը ձգեց երեխայացեալ բազմութեան վերայ՝ երբ նոքա մկրտութեան աւազանումը, Եփրատ գետումն էին:

Հին — Աւիտի եկեղեցու մէջ մենք տեսանք որ ոչ միայն մարդիկ, այլ Աստուծոյ անուան նուիրեալ իրերն ևս էին օծվում, ինչպէս Յակովբի քարը Բեթելում (Յնն. ԽԼ. 18 և ԼԱ. 13). և Վկայութեան Խորանը՝ պարագայիւք (ԵԼք. գլ. Լ. 26—29):

Հայաստանեայցս եկեղեցին օծումէ եկեղեցու նիւթական շէնքը յանուն Աստուծոյ սրբելով՝ Տաճն Աստուծոյ կացուցանելու համար. օծում և սրբումէ Խաչը՝ որով մեր փրկութիւնը հրաշագործուեց, ինչպէս օծուեց Տապանակ Աւիտին Հին — Աւիտի Վկայութեան Խորանի մէջ. (ԵԼք. Լ. 26). օծվումեն տէրանական պատկերները՝ որոնք բացատրումեն Աստուծոյ անսահման մարդասիրութիւնը մարդկանց վերայ՝ նոյա բարոյական վերականգման համար, ինչպէս օծուեցին Վկայութեան Խորանի հարկաւոր մասերը. (ԵԼք Լ. 27—29):

Սրովհետեւ օծմանը այսրան մեծ նշանակութիւն է տրուած եկեղեցական խորհուրդների մէջ, որ քան Օծման Իւղի պատրաստութիւնն ևս պէտք է մեծ նշանակութիւն ունենար: Հին — Աւիտի օծման իւղը եփեց և պատրաստեց Մովսէս — Իսրայէլի եկեղեցու պէտք. (ԵԼք գլ. Լ. 22—25):

Հայաստանեայցս եկեղեցւոյ Օծման Իւղը օրհնումէ հայկական եկեղեցու պէտք ըստ ազգային եկեղեցական ժողովոյ:

Աւթերորդ դարի առաջին քառորդում, 719 թուին Հայաստանեայցս եկեղեցին Դուռոյ է. ժողովում սահմանումէ երեք տեսակ իւղ օծման. Ա. Ս. Միւռոն՝ որ հայրապետը պէտք է օրհնէր ըստ այնմ. «Զսուրբ Մեռոնն Հայրապետն օրհնեցէ» . (Յօդ. Թ.): Բ. Ձէթ երեխայութեան որ պէտք է քահանան օրհնէր, ըստ այնմ. «Զձէթ երեխայութեան յատուկ ի կիր առնուլ, զոր քահանայն օրհնեցէ այնչափ՝ որչափ պիտոյ է» . (Յօդ. Ժ.): Գ. Հիւանդաց Օծման Ձէթ, որ դարձեալ քահանան պէտք է օրհնէր, ըստ այնմ. «Զձէթ օծութեան հիւանդաց քահանայն օրհնեցէ ըստ իւրում աղօթից և ըստ ժամուն պիտոյից» . (Յօդ. ԺԱ.): Իսկ

768 թուին, Պարտաւի Բ. Ժողովում Հայաստանեայց եկեղեցին սահմանեց որ Ս. Միւռնը միայն պէտք է օրհնէ հայրապետի, որից իւրաքանչիւր տարի պիտի ստանան եպիսկոպոսները, որոնք չըպէտքէ համարձակուեն Միւռնն օրհնել կամ օրհնուածի վերայ բան աւելացնել, ըստ այնմ. «Եպիսկոպոսք մի իշխեալն մեռն օրհնել, կամ յօրհնեալն յաւելուլ ինչ, այլ ի հայրապետէն առցեն ամ յամէ» (Յօդ. Ե.) :

Հայաստանեայց եկեղեցին բաղմոսպատիկ փորձերից յետոյ բարւոք դատեց խափանել Երեխայութեան և Հիւանդաց Օժման ձէթը. սահմանելով մկրտութեան ժամանակ Ս. Միւռն գործածել, իսկ Հիւանդաց Օժման խորհուրդը միայն աղօթքով կատարել, որ խորհրդի էական մասն է, որովհետեւ ըստ առաքելոյն բանի՝ հաւատով աղօթքը պէտք է փրկէ աշխատեալին. (Յակ. Ե. 14) :

Հայաստանեայց եկեղեցին խափանելով Երեխայութեան և Հիւանդաց Օժման ձէթի գործածութիւնը և սահմանելով միմիայն Հայրապետի օրհնած Ս. Միւռնը առնուլ ի կիրառութիւն, բոլոր ազգը Հայրապետական Աթոռի հետ կապելու նպատակն ունէր, եւ արդարեւ, երբ վիճակաց եպիսկոպոսները իւրաքանչիւր տարի հայրապետից Ս. Միւռնն ստանալու հարկի մէջ էին լինում, իրանք իրանց Ժողովրդով հանդերձ ամբապնդումէին կրօնական և բարոյական միութեան կապը կենտրոնի հետ. իսկ այդ բարոյական կապը միմիայն կրօնական առանձնութեամբ գոյութիւն ունեցող ազգի համար փրկարար միջոց էր. Խզուելով այդ կապը, խզվումէր և կենտրոնի հետ յարաբերութիւնը, իսկ կենտրոնից անջատուածները լուծվումէին իրանց շրջապատող օտար ազգերի մէջ, Պատմութեան մէջ հարկւրաւոր օրինակներ կան :

Ս. Միւռնն բաշխելու գործը դիւրացնելու համար հայրապետը աշխարհի ամենայն կողմը, ուր Հայք կային նուիրակներ ուղարկելով՝ մատակարարումէր իւր օրհնութիւնը հայրապետական սատուէրները և Ս. Միւռնը. նուիրակները գնացած լինելով Մայր Աթոռից, իբրեւ նախանձախնդիր եկեղեցական կտրգաց և կանոնաց՝ հսկումէին օտարերկրեայ ազգայնոց եկեղեցական և հոգեւոր պաշտամանց անթիրի և անաղարտ պահպանութեան վերայ : Մայր Աթոռը ի փոխարէն՝ իւր ըստ հոգեւորին յանձանձանաց՝ վարձատրվումէր նիւթապէս, և այս նիւթական վարձատրութեան արդիւնքն են Մայր Աթոռոյս մէջ եղած զանազան շինութիւնները :

Ընդհատուելով նուիրակութիւնը տարագիր հայք մի կերպ անջատուած են մնում կենսութեանից և մասամբ զրկուած Մայր Աթոռոյս ըստ հոգեւորին յանձանձիւ խնամարկութիւնից՝ ուստի և հետ զհետէ ի ցաւ սրտի օտարանումն:

Ահա թէ ինչ նշանակութիւն ունէր Օծումն և Օծման Իւղը Հին - Ուխտի եկեղեցու մէջ, և ինչ նշանակութիւն ունի Նոր - Ուխտի եկեղեցու մէջ:

Յ. Վ. Մ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Ե-Ե-Ե-Ե. ՍԵ-Ե-Ե. 1886 Ք. Ե.)

ԳԼ. ԺԿ.

Յովհաննէս Բ. կաթողիկոսանալուց յետոյ տաճկահայոց ու սարսկահայոց հաւանութիւնը և սուլթանի ու շահի հաստատութեան հրովարտակն ևս ստանալու համար կամեցաւ մի մի եպիսկոպոս և մի մի վարդապետ ուղարկել Կ. Պօլիս ու Պարսկաստան, բայց չըկարողացաւ ի կատար ածել, որովհետեւ Ռուսաց կառավարութիւնը 1831 Գեկում. 28 գրութեամբ *) յայտնեց որ կաթողիկոսների հաստատութիւնը պատկանումէ միայն Ռուսաց տէրութեանը, Ռուսաց գործակատարների՝ ձեռքով կըստացուի հրաման՝ որ Տաճկաց և Պարսից հայերը Էջմիածնի հետ յարաբերութիւն ունենան, իսկ հայրապետական կոնգալները և այլ թղթերը օտարերկրեայ հոյերին կըհասնին Ռուսական գործակատարների ձեռքով:

Յովհաննէս Բ. շատ աշխատեց վերահաստատել Տաճկաստանում նախկին յարաբերութիւնը, բայց հուսկ ուրեմն պարտաւորուեց բաւականաւ հեռեւ ելլ պայմաններով. Ա. Տաճկահայք պէտք է ընդունեն Էջմիածնի ընդհանրական հայրապետի գերիշխանութիւնը ըստ հոգեւորին. Բ. Ս. Միւռնը պէտք է ընդունեն Տաճկահայք Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսից, և Գ. Բացի Սոյ և Աղթամարայ թեմերից՝ Տաճկաստանի վարդապետք Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսից պէտք է ստանան եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

(*) Պատմ. կաթողիկոսաց Էջմիած. եր. 148 Ծան. 66.